

ԳՆԱՀԱՏՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ ՔԱԼԻՖՈՐՆԻԱՅ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՒԹԻՒՆ

Հ. Բ. Բ. Միութեան ձեռնարկած Մէկ Միլիոն Տոլա-
րի Հանգանակութեան յաջող ելքին առթիւ գնահատու-
թեան առատ բաժին մը եւ Էրախտազիտութեան տուրք
մը կը պարտինք Քալիֆորնիոյ Հայ Ժողովուրդին, իր
յայտնաբերած Հայրենասիրութեան եւ առատաձեռնու-
թեան համար, որով Մէկ Միլիոն Տոլարի Հանգանակու-
թեան իրենց յատկացուած սակը ցարդ գերակատարեցին
կրկինով, այժմ 300,000 տոլարով։ Ինչպէս նաեւ կը վա-
փաքինք անզամ մը եւս հրապարակաւ յայտնել մեր գնա-
հատուիւնը սոյն համազգային Հանգանակութեան Վարիչ
Տ. Ա. Սեդրակեանի՝ իրեն թանկադին աջակցութեան հա-
մար։ Ծնորհակալութիւն նաեւ Հ. Բ. Բ. Միութեան Քա-
լիֆորնիոյ Շրջ. Յանձնաժողովին եւ Մասնաճիւղներուն
բոլոր անդամներուն, Եկեղեցական եւ Հայրենակցական
Մարմիններուն, ինչպէս նաեւ Հայ մամուլին, որոնց ան-
վերապահ համակրութեամբն ու գործակցութիւնովը ա-
պահովուեցաւ այս մեծ յաջողութիւնը։

Ուրախ եմ որ հրապարակաւ կը կատարեմ հաճելի
պարտականութիւնս, Հանգ. Կեղրոն. Յանձնախումբին և
իմ անկեղծ Ծնորհակալութիւնս յայտնելով, գլխաւորա-
րար Քալիֆորնիոյ պատուական համայնքին, որ իր Հայ-
րենասիրութիւնը դրականապէս ապացուցուց՝ Եռանդա-
դին սատարելով ՆերգԱՂԹի աղջահաւաքման եւ ազգա-
պահպանման նուիրական գործին։

ԼԵՒՈՆ ԿԵՐՏԱՆ
Նախագահ
ՆԵՐԳԱՂԹԻ ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՏՈԼԱՐԻ ՀԱՆԳ.
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՑԱՆՉՆԱԽՈՒՄԲԻ